# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**___ _____ 2024 թվականի N _____ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1.3-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման նախաբանը «24-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1.3-ին մասը բառերով» և N 1 հավելվածում.

- 3-րդ կետը «անձի» բառից հետո լրացնել «կամ «Պետական նպաստների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1.3-րդ մասով նախատեսված դեպքում՝ օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության (դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ) մարմնի (այսուհետ՝ դիվանագիտական ծառայության մարմին)» բառերով.
- 6-րդ կետը «մարմինը» բառից հետո լրացնել «կամ «Պետական նպաստների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1.3-րդ մասով նախատեսված դեպքում՝ ծննդի պետական գրանցում իրականացրած դիվանագիտական ծառայության մարմինը, ում հասանելի է էլեկտրոնային հյուպատոսական համակարգը» բառերով.
- լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«4.3. Եթե նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է

դիվանագիտական ծառայության մարմինը, ապա դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող ծնողը կամ նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսինը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձը նպաստի համար կարող է դիմել նաև դիվանագիտական ծառայության մարմնի միջոցով։ Այս դեպքում սույն կարգի 3-րդ կետում նշված դիմումը և կից փաստաթղթերը դիվանագիտական ծառայության մարմինը ծառայություն է ուղարկում իր պաշտոնական փոստից՝ դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով հաստատված գրությամբ կամ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գրությամբ ելքագրված վերընթերցված /սկանավորած/ տարբերակը։».

- 18-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ օտարերկրյա քաղաքացի ծնողը բնակչության պետական ռեգիստրում երեխայի ծննդյան օրվա դրությամբ երեք տարի անընդմեջ հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով» բառերը.
- 18-րդ կետի 1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին ենթակետով.

«1.1) օտարերկրյա քաղաքացի ծնողը բնակչության պետական ռեգիստրում երեխայի ծննդյան օրվա դրությամբ երեք տարի անընդմեջ հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, ծնողը և նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ չեն գտնվում Հայաստանի Հանրապետությունում, չի ներկայացվել օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ նշանակված չլինելու վերաբերյալ տեղեկանք.».

- 20-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «(բացառությամբ այն դեպքի, երբ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի կապակցությամբ նպաստը նշանակվել է խնամակալին)» բառերով.
- 25-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին կետով.

«25.1. Եթե ծնողը դիմումը ներկայացնում է դիվանագիտական ծառայության մարմնի միջոցով, ապա նպաստի գումարը վճարվում է բացառապես ծնողի բանկային հաշվին փոխանցելու եղանակով՝ բացառությամբ այն դեպքի, երբ դիմումին կից ներկայացվել է ծնողի տված՝ նպաստը այլ անձի վճարելու վերաբերյալ նոտարի կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի վավերացրած լիազորագիր։ Այս դեպքում նպաստը վճարվում է նաև լիազորված անձի բանկային հաշվին փոխանցվելու միջոցով։».

- 34-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.
- 40-րդ կետի՝

ա.1-ին ենթակետը «երեխայի» բառից առաջ լրացնել «նպաստը նշանակելուց հետո» բառերով,

բ. 3-րդ ենթակետը «կարգավիճակ» բառից հետո լրացնել «, բացառությամբ, երբ նպաստը նշանակվելու է խնամակալին» բառերով։

2. 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: